

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ը

Դործը, այո՛, գեղեցկագոյնն դուրս կուգայ՝
Գաղապարէ ծ'աշխատանքին անհրաժ,
Ռոտանաւոր, ճարճար, սնիքս կամ կիտուած:

Բընա՛ւ երեք բունագրօսիկ սեղծութիւն,
Բայց քալելու համար շիտակ, ո՛վ Մուսայ,
Ոտքըդ թող նեղ խաղակօշիկը հագնի:

Մէկկի՛ երթայ թող կըշուութի՛ւնը դիւրին,
Ինչպէս մուճակ մը շատ խոշոր, անճաշակ,
Ջոր ամէն ոտք կըրնայ առնել ու ձրգել:

Արձաճագո՛րծ, դուն մի՛ երեք զիջանիր
Գալին զոր մա՛տը կը շարուէ երբ անդին
Անփութօրէն կը թափառի միտքն այլուր:

Մաքառէ՛ դուն ճարճարին հետ քարարեան
Կամ հաղապարտ պարօսին հետ կարծրակուռ,
Որ կ'պահպանեն շըրջապըծի՛րը մաքուր:

Սիրակուսեան հողերէն պրո՛նը փոխ առ,
Ուր ամբօրէն կը քանդակուի շէջըրուած՝
Խըրդխտագեղ պատկերազոյ՛նը սիրուն:

Նըրբափափուկ ձեռքով մը դուն հետամուտ
Եղի՛ր փորել դէմքն Ապողոն աստուծոյն՝
Մէկ երակին մէջ թանկագին ակառին:

Հեռու կեցի՛ր ջրաներկէն, ո՛վ նըկարիչ,
Եւ փուռին մէջ կիտուածագործ վարպետին
Սեւեւէ՛ շատ խուսափուկ ներկը բարակ:

Կապուտաշող համբարուններն յօրինէ
Որ բիւր ձեւով կը գալարեն պոչերին
Ու հրէշներն որ զինանշաններ կը պըճեն:

Եռաբլթակ լուսապսակին մէջ ցոյց տուր
Ատուածածինն ու իր Յիսուսը ճանկիկ,
Եւ երկարօ՛ւնտը վըրան խաջ մը ցըցուած:

Կ'անցնի ամէն բան . լոկ արուհիսը ճգոր՝
Յաւեթութեան է սահմանուած: Ուտաններն
Յը քանդուին, ու կը մընայ կիսանդրին:

Եւ խըստագրոջմ մետալը զոր երկարգործ
Մ'հողուն ծոցէն դուրս կը հանէ, Կին կայսեր
Մը մոռցուած անունն ի յայտ կը բերէ:

Ատուածներն իսկ կը մեռնին, բայց տիրական
Տաղերը մի՛շտ անջընջիլ կը ճընան,
Քան արյուն իսկ աւելի պինդ և ամուր:

Քանդակէ՛ դուն, ու ողորկէ՛, ու դրօշէ՛.
Թող քու երա՛գըդ ծոծանուո՛ր դիմացկուն
Ձանգունօրին մէջ ապրի յաւէտ կընքուած:

Թարգմ. Ա. Չ.

ԹԷՆՈՅԻՆ ԿՈՒԻՆԷ

Ք Ր Ո Ն Ի Կ

Փարիզի հայ գաղութը իր ամենէն յարգելի
անդամներէն մին, հայ ժողովուրդը իր ամենէն
ազնիւ զաւակներէն մին կ'ոբանջուց յանձն
Միհրան Յովակիմեանի, զոր անողոք հիւան-
դութիւն մը յանկարծակի խելց գինքը սի-
րողներէն:

Որդի Յովհաննէս Յովակիմեանի, որ թրքա-
հայ վաճառականութեան մէջ նոր շրջան մը
բացած է՝ զարգացած, եւրոպաձեւ վաճառա-
կանութեան մը հիմունքը գնելով մեր մէջ եւ
վաճառականութեան մասին եւրոպական գիր-
քեր թարգմանելով, Միհրան Յովակիմեան
ինքն ալ եղաւ մին այն սակաւաթիւ հայ վա-
ճառականներէն, որ գիտեն թէ պէտք է դրամ
վաստակիլ ապրելու համար, եւ ոչ թէ ապրիլ
դրամ վաստակելու համար. եւ ինք գիտէր նաեւ
թէ ապրելու լաւագոյն ու ճշգրտօրն եղանակը
միմիայն ինքզինքին համար ապրիլը չէ, այլ
մանաւանդ իր պատկանած հասարակութեան
համար. Այլասէր, անձուէր մարդը եղաւ
գերազանցապէս Պոսոյ Ազգ. ժողովին մէջ
իբր երեսփոխան, յետոյ՝ անդամ վարչու-
թեան, յետոյ՝ գերատնտեսպետ եւ վերջ ի
վերջոյ ատենապետ, Միհրան Յովակիմեան
ցոյց տուած է միշտ մաքուր, գիտակից, ան-
շահախնդիր ազգասիրութիւն մը, որ գինքը
յարգելի եւ սիրելի ըրած է ամենուն. 1895ի
մեծ ճգնաժամին, երբ ազգը «էֆէնտինիւր»
տեղ շուկայի մարդիկ բերաւ վարչութեան
գլուխը գնելու, Յովակիմեան այդ պատմական
քաղաքական ժողովին ամենէն ցալուռն գէմքը
յայտնուեցաւ. Իզմիլեան պատրիարքին հո-
գեկիցը, խորհրդակիցը, անոր ալ բազուկը